ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև Կատարի Պետության տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության կանոնակարգման մասին» համաձայնագրի ստորագրման նպատակահարմարության

2011 թվականին «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև Կատարի Պետության տարածքում Հայաստանի Հանրապետության աշխատուժի օգտագործման մասին» համաձայնագիրն անցել էր ներպետական համաձայնեցման բոլոր ընթացակարգերը և նախաստորագրվել: 2013 թվականին Կատարի Պետության կառավարության պատվիրակության Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում քննարկվել են համաձայնագրի՝ մասնավորապես ՀՀ քաղաքացիների աշխատանքային իրավունքներին առնչվող դրույթները, որոնց վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ներկայացրել է առաջարկություններ:

Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կատարական կողմը առաջարկում է ստորագրել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև Կատարի Պետության տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների զբաղվածության կանոնակարգման մասին» նոր համաձայնագիր, ինչպես նաև այն, որ 2018 թվականից գործում է «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ նոր օրենքը, ապա համաձայնագիրը պետք է լրամշակվի, ինչպես նաև շրջանառվի օրենքի դրույթներին համապատասխան:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կարևորում է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև Կատարի Պետության տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության կանոնակարգման մասին» համաձայնագրի ստորագրումը, քանի որ այն կնպաստի Կատարի Պետության տարածքում աշխատող կամ աշխատելու ցանկություն ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային հարաբերությունների կարգավորմանը, իրավունքների ու շահերի պաշտպանությանը:

Համաձայն «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը մշակում և իրականացնում է աշխատուժի ներքին և արտաքին տեղաշարժի կարգավորման միասնական պետական քաղաքականություն: Համաձայն նույն օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի՝ լիազորված մարմինն աշխատուժի տեղաշարժը կարգավորելու նպատակով

օրենքով սահմանված կարգով կնքում է միջազգային պայմանագրեր՝ արտագնա աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև աշխատանքային միգրանտների շահերի պաշտպանության հարցերով: Համաձայն նույն օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ կետի՝ աշխատուժի ներքին տեղաշարժը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ արտաքին տեղաշարժը՝ նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Հուշագրի կնքումը կնպաստի նաև «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ դրույթների իրացմանը:

Ելնելով վերոգրյալից և «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի հիմքով՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նպատակահարմար է գտնում «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև Կատարի Պետության տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության կանոնակարգման մասին» համաձայնագրի ստորագրումը:

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ